ԻՇԽԱՆԱԶՆ ՎԱՀՐԱՄ ԴԱԴԵԱՆ

Նորերս Պարսից շահի կողմից արքայական վարձատրութեան է արժանացել հայազգի իշխանազն Վահրամ Դադեանը, որ Տաճկաստանում յայտնի պետական գործիչ Արթին-Փաշա Դադեանի եղբօրորդին է։ Հետաքրքրական է իշխան Դադեանի վիճակը, որ 1892 թ. փախուստ տալով Տաճկաստանից գալիս է Պարսկաստան, պաշտպանութիւն է գտնում և մեծ ատիճանների ու շնորհների արժանանում շահերի կողմից։

Իշխան Վահրամ Դադեանը, Տաճկաց արտաքին գործերի նախարարի օգնականի եղբօրորդին, ամուսնացած լինելով ունդարացի գեներալ դրաֆ Սէչէնի աղջկայ հետ՝ պետական պաշտօն ունէր Տաճկաստանում։ Բայց յայտնի չէ թէ ինչ պատճառներից կասկածուելով իբրև թէ մասնակից է հայկական գործերին, Սուլթանի տհաճութեանն արժանացաւ և աւելի լաւ համարեց թողնել Կ. Պոլիսը։ 1892 թ. իւր ամուսնու հետ նա եկաւ Թեհրան և պարսկահպատակութիւն ընդունելով՝ մտնում է պետական ծառայութեան. ինչպէս հանգուցեալ Նասրէդդինը այնպէս և այժմեան շահը ողորմած աչքով էին նայում նրան և զանազան պաշտօններ յանձնելով՝ հասցրին գեներալութեան և շահի ադիւտանտութեան։ Այժմ իշխան Դադեանը սպախանայրի առանձին յանձնարարութեանց պաշտօնեայ է։

Այս օրերս իշխանազն Վահրամ Դադեանը ստացել է շահի հետևեալ ֆիրմանը.

«Մենք օգնութեամբն ամենակարողն Աստուծոյ Մուզաֆէրէդդին, Շահնշահ Իրանի, յայտարարում ենք. ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ մեր հաճելի պարտքն է վարձատրել մեր հաւատարիմ ծառաների աշխատանքն ու ծառայութիւնները և որովհետև բարձրաստիճան և մեր պալատին մերձաւոր իշխան Վահրամ Դադեանը, մեր գեներալն ու անձնական ադիւտանտը իւր ծառայական պարտաւորութիւնները կատարելիս գերազանց հանդիսացաւ,—ինչպէս որ հաղորդեց մեզ այդ մասին մեր աչքի լոյս մեծ Էմիրն ու Սարդարը, մեր սպախանայրը և պատերազմական նախարարը,—մենք ի հետևումն մեր մեծ վէզիր Աթաբէգի առաջարկութեան իշխան Վահրամ Դադեանին շնորհում ենք սուր երկրորդ ատիճանի, զարդարուած շողակներով, որպէս զի նա աւելի մեծ եռանդ ցոյց տայ իւր ծառայութեան ասպարիզում և մեր գահին նուիրուելու գործում։ Տուած է շաբան ամսին. 1320 թ.։

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ։

Վեհափառ Հայրապետը Թիֆլիս եղած ժամանակ հաճե-